

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (1990-1995 թթ.)

### Լևոն ՇԱՆՊԱՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ*

Հայաստանի «Անկախության հռչակագիրը» պատմաքաղաքական մեծ նշանակություն ունեցավ մարդու իրավունքների իրավական ինստիտուտի կայացման համար՝ սահմանելով, որ ոլորտի իրավական զարգացման ռազմավարությունը որոշում են միջազգային իրավական չափորոշիչները: 1991 թ. սեպտեմբերից սկսվեց ՀՀ անկախության ճանաչման միջազգային գործընթացը, ինչը թույլ կտար Հայաստանին միջազգային ասպարեզում հանդես գալու որպես ինքնուրույն և լիիրավ անդամ՝ դրանից բխող բոլոր իրավունքներով և պարտավորություններով<sup>1</sup>: Հայաստանը դարձավ ՄԱԿ-ի անդամ: ՄԱԿ-ի կանոնադրությունը միջազգային հարաբերությունների պատմության մեջ առաջին բազմակողմ պայմանագիրն է, որում ամրագրվեցին մարդու իրավունքների հարցում պետությունների համագործակցության ու զարգացման հիմքերը: ՄԱԿ-ի կանոնադրությունը պարտավորեցնում է պետություններին զարգացնել միջազգային համագործակցությունը՝ «բոլորի հանդեպ և բոլորի համար մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների համընդհանուր հարգանքին և պահպանմանը՝ անկախ ռասայից, սեռից, լեզվից կամ դավանանքից» (հոդվ. 55, կետ «c»): Այսինքն՝ դրանով պետությունները ստանձնում են իրավական պարտավորություն՝ պահպանել մարդու հիմնական իրավունքները և ազատությունները, առանց որևէ խտրականության<sup>2</sup>:

Դրանից հետո՝ 1991 թ. սեպտեմբերի 25-ից մինչև 1995 թ., մարդու իրավունքների իրավական կայացումը ՀՀ-ում տեղի էր ունենում նաև մարդու իրավունքներին վերաբերող միջազգային իրավական ակտերի վավերացման միջոցով: Հայաստանի Հանրապետությունը մինչև 1991 թ. սեպտեմբերի 25-ը, այսինքն՝ մինչև անկախության հռչակումը, 1991 թ. ապրիլի 1-ին վավերացրել էր «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային պայմանագիրը»՝ կից ֆակուլտատիվ արձանագրությամբ<sup>3</sup>: Անկախության հռչակումից հետո ՀՀ-ի միջազգային ճանաչմանը զուգընթաց սկսվեց նաև միջազգային այլ, ներառյալ մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրերի վավերացման գործընթացը: 1991 թ. սեպտեմբերից մինչև 1995 թ. սկիզբը ՀՀ-ի վավերացրած և միացած 148 միջազգային պայմանագրերից 32-ն ուղղակիորեն առնչվում էին մարդու իրավունքներին<sup>4</sup>:

<sup>1</sup> Առաջինը ճանաչեց Վրաստանը: 1991 թ. դեկտեմբերի 25-ին ԱՄՆ-ի նախագահը հայտարարեց Հայաստանի անկախությունը ճանաչելու մասին: Մինչև 1992 թ. օգոստոս Հայաստանի անկախությունը ճանաչեցին ևս 103 պետություններ:

<sup>2</sup> Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության շրջանակում կնքված պայմանագրեր, Երևան, հատ. 1, 2008, էջ 15:

<sup>3</sup> Տե՛ս Խաչատրյան Հ. Մ., Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստ. - Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997, էջ 369:

<sup>4</sup> Ըստ ժամանակագրական հերթականության վավերացված պայմանագրերի շրջանակը տե՛ս նույն տեղում, էջ 369-384:

Միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության հարցում Երրորդ հանրապետության սահմանադրական օրենսդրությունն ուներ բաց: Ձևականորեն գործում էր ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրությունը, որում կարգավորված չէր այդ հիմնահարցը: Պատճառն այն էր, որ խորհրդային սահմանադրական օրենսդրությունն արտաքին քաղաքական հարաբերությունների ոլորտը վերապահում էր ԽՍՀ Միության իրավասությունը: Հետևաբար ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրությունն արձանագրում էր այդ փաստը՝ սահմանելով, որ ՀԽՍՀ-ն արտաքին քաղաքական գործունեության մեջ ղեկավարվում է արտաքին քաղաքականության այն նպատակներով, խնդիրներով, որոնք որոշված են ԽՍՀՄ Սահմանադրությամբ: Ստացվում էր, որ ԽՍՀՄ փլուզումից հետո դրա Սահմանադրությունը գործում էր Հայաստանի իրավական համակարգում, որովհետև ՀԽՍՀ Սահմանադրությունն արտաքին քաղաքականության հիմնահարցերում վկայակոչվում էր ԽՍՀՄ 1977 թ. Սահմանադրությունը, որի 29-րդ հոդվածը սահմանում էր. «Մյուս պետությունների հետ ՍՍՀՄ-ի հարաբերությունները կառուցվում են սուվերեն հավասարության, ուժ գործադրելուց կամ ուժով սպառնալուց փոխադարձ հրաժարման, սահմանների անխախտելիության, պետությունների տերիտորիալ ամբողջականության, վեճերի խաղաղ կարգավորման, ներքին գործերին չմիջամտելու, մարդու իրավունքների ու ազատությունների հարգման, ժողովուրդների իրավահավասարության և իրենց բախտը տնօրինելու իրավունքի, պետությունների համագործակցության, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներից ու նորմերից, ՍՍՀՄ-ի կնքած միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքների պահպանման վրա»:

Ինչպես տեսնում ենք, սահմանադրական այդ նորմը թվարկում էր նաև «կնքած միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքը»: Նման սահմանադրական լուծումը, այսինքն՝ միայն նշված սկզբունքի վկայակոչումը, անորոշ էր, որովհետև սահմանադրական կարգավորումը չէր նախատեսում միջազգային և ներպետական իրավական համակարգերի փոխգործակցության ձևերի իրավական կարգավորումը՝ միջազգային իրավունքի անմիջական կամ միջնորդավորված գործողության հիմնահարցը, երկուսի միջև կոլիզիաների լուծման եղանակները, դրա իրավական միջոցները և այլն:

Վերակառուցման շրջանի խորհրդային սահմանադրական և միջազգային իրավական դոկտրինաները ընդունում էին միջազգային իրավունքի նորմերի իրականացումը, կիրառումը ներպետական իրավունքում<sup>5</sup>: Այդ դոկտրինաները առանձնացնում էին ներպետական իրավունքի միջոցով միջազգային իրավունքի իրացման և կիրառման երեք ձև.

ա) միջազգային պայմանագրերի կատարման նպատակով նոր օրենսդրական ակտի հրապարակում կամ գործող օրենսդրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարում<sup>6</sup>,

բ) միջազգային պայմանագրերի կիրառման կարգը սահմանող ակտի ընդունում,

գ) ազգային օրենսդրության մեջ հատուկ հոդվածները (վկայակոչումները) միջազգային պայմանագրերին, որոնք իրավասու մարմիններին կողմնորոշում են համապատասխան պայմանագրերի նորմերի կատարմանը<sup>7</sup>:

<sup>5</sup> Տե՛ս **Игнатенко Г.В.**, Взаимодействие внутригосударственного и международного права. Свердловск, 1998, էջ 4-16:

<sup>6</sup> Այս ձևն անվանում էին տրանսֆորմացիա կամ ինկորպորացիա՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ միջազգային նորմը վերափոխվում է ներպետական իրավունքի նորմի կամ բառացիորեն ներառվում է ներպետական ակտում (ինկորպորացիա):

<sup>7</sup> Տե՛ս **Международное право / Под ред. Н.Т. Булатовой, М., 1987, էջ 64:**

Ներքին իրավունքում հղումների կիրառումը խորհրդային պրակտիկայում լայնորեն տարածված էր, և գործնականում առկա էին դրա երկու տեսակները՝ միջազգային պայմանագրերի համալիր կիրառում (միջազգային և ներպետական նորմերի համատեղ կիրառում) և առաջնային կիրառում: Վերջինս հասկացվում էր որպես միջազգային և ներպետական իրավունքների կոլիզիայի լուծման ձև, սակայն միայն հղման առկայության դեպքում: Այդպիսով, խորհրդային դոկտրինան չէր ընդունում միջազգային նորմը ներպետական իրավունք ներմուծելու ընդհանուր դոկտրինան կամ անմիջական գործողությունը՝ առանց հղումների, և նույնիսկ վերջիններիս առկայության դեպքում համարում էր, որ վկայակոչումը կամ հղումը միջազգային նորմը ներպետական իրավունք չի ներմուծում, այլ միայն բնութագրում է երկու իրավական համակարգերի փոխհարաբերությունները դրանց կիրառման գործընթացում: Այս տեսանկյունից նույնիսկ վերակառուցման շրջանի խորհրդային իրավական դոկտրինան քննադատորեն էր վերաբերվում «բուրժուական պետությունների» սահմանադրական այն նորմերին, որոնցով միջազգային պայմանագրերը հայտարարվում էին ներպետական իրավական համակարգի տարր, սահմանվում էր միջազգային իրավունքի առաջնությունը ներպետական իրավունքի նկատմամբ<sup>8</sup>:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո միջազգային պայմանագրերի և ներպետական օրենսդրության հարաբերակցության հիմնահարցը հստակ իրավական հայեցակարգային կարգավորման չէր ենթարկված: 1990-1995 թթ. ընդունված սահմանադրական ակտերից ոչ մեկը չէր անդրադարձել այս հարաբերակցության կարգավորմանը: Օրենսդիրն այս հարցում դիմել էր ոչ թե ընդհանուր, այլ հատուկ կարգավորման, այսինքն՝ ամեն մի օրենքի ընդունմամբ դրա և միջազգային պայմանագրերի հարաբերակցության հարցի լուծմանը: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ օրենսդրական պրակտիկան միջազգային և ներպետական իրավունքների հարաբերակցության հարցում հետևում էր խորհրդային հայեցակարգին:

Առաջին օրենքը, որում Երրորդ հանրապետության օրենսդիրը վկայակոչում էր միջազգային պայմանագրերը, 1991 թ. հունվարի 29-ի ընդունված Հողային օրենսգիրքն էր: Դրա ամենավերջին՝ 78-րդ հոդվածը սահմանում էր, որ եթե ՀՀ միջազգային պայմանագրով սահմանված են այլ կանոններ, քան պարունակում է սույն օրենքը, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի կանոնները<sup>9</sup>: Օրենքում օգտագործված այս հղումը խորհրդային դոկտրինան անվանում էր առաջնային կիրառում, ըստ որի՝ միջազգային և ներպետական իրավունքների հակասության դեպքում կիրառվում են միջազգային նորմերը: Հետագայում միջազգային իրավունքի առաջնային կիրառումն ապահովող բազմաթիվ օրենքներ են ընդունվել<sup>10</sup>:

Երրորդ հանրապետության օրենսդիր մարմնի պրակտիկայում հանդիպում ենք նաև միջազգային իրավունքի իրացման տրանսֆորմացիոն ձևին: Այսպես, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» (1991թ. հունիսի 17) ՀՀ օրենքի պրեամբուլայում սահմանվում էր, որ «առաջնորդվելով միջազգային իրավունքի նորմե-

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 63:

<sup>9</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ..)», Երևան, 1995, էջ 106:

<sup>10</sup> Մինչև անկախության հանրաքվեն այդ հարցը նման կերպ են կարգավորել բազմաթիվ օրենքներ: Օրինակ՝ «Բնության պահպանության մասին ՀՀ օրենսդրության հիմունքները» (1991թ. հուլիսի 9), որի 31-րդ հոդ. սահմանում էր. «այն դեպքերում, եթե միջազգային պայմանագրով ՀՀ վրա տարածվում են այնպիսի բնապահպան պահանջներ, որոնք տարբերվում են ՀՀ բնության պահպանության վերաբերյալ օրենսդրության պահանջներից, կիրառման ենթակա են միջազգային պայմանագրի պահանջները» (տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), էջեր 157, 240, 297, 339, 351, 473):

րով սահմանված մարդու իրավունքների և հիմնական ազատությունների սկզբունքներով և հավատարիմ լինելով քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 18 հոդվածի դրույթներին՝ ՀՀ Գերագույն խորհուրդը ընդունում է սույն օրենքը: Օրենսդրի նման ձևակերպումից բխում էր, որ նոր ընդունվող օրենքն ամբողջությամբ ներառել էր կարգավորման հարաբերությունների վերաբերյալ միջազգային պայմանագրի դրույթները, ինչը հաստատում է հենց նույն օրենքի «Ընդհանուր դրույթներ» մասի 1-3-րդ հոդվածների իրավական ձևակերպումները, որոնք գրեթե վերարտադրում են «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի դրույթները»<sup>11</sup>: Այս օրենքի դրույթները վկայակոչում էին նաև մարդու իրավունքների միջազգային իրավունքի սկզբունքները՝ որպես օրենքի ընդունման առաջնորդող դրույթներ:

Այսպիսով, մինչև 1995 թ. Սահմանադրության ընդունումը ինչպես ընդհանրապես, այնպես էլ մարդու իրավունքների միջազգային իրավունքի ներպետական ոլորտում գործողության հարցում ՀՀ-ն հետևում էր խորհրդային սահմանադրական և միջազգային իրավական դոկտրինայից բխող միջազգային պայմանագրերի իրացման երեք հիմնական ձևերին՝ տրանսֆորմացիան (ինկորպորացիան), ներպետական ակտում միջազգային ակտերին կատարվող հղումները՝ սահմանելով համալիր կիրառման կամ կոլիզիոն կիրառման կարգը, ինչպես նաև ընդունում էր միջազգային պայմանագրերի կիրառման կարգը սահմանող ակտեր: Այդպիսի ընդհանուր օրենք էր համարվում «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կնքման, վավերացման և չեղյալ հայտարարման մասին» ՀՀ օրենքը (1992 թ. հունիսի 6)<sup>12</sup>: Թվում էր, թե այս օրենքը դուրս կգար խորհրդային սահմանադրական իրավական դոկտրինայի և պրակտիկայի շրջանակներից և կորդեգրեր միջազգային և ներպետական իրավունքների հարաբերակցության նոր հայեցակարգ՝ ընդօրինակելով եվրոպական փորձը<sup>13</sup>: Սակայն այդ օրենքը սահմանեց միայն ընդհանուր պարտավորություն, որ ՀՀ միջազգային պայմանագրերը ենթակա են անվերապահ կատարման, իսկ դրանց և Հայաստանի Հանրապետության օրենսդրության հակասության դեպքում գերակայությունը տրվում է միջազգային պայմանագրով սահմանված իրավական նորմին (հոդված 15)<sup>14</sup>: Ինչպես տեսնում ենք, օրենքը միջազգային իրավունքի ներպետական իրավունքում և իրավակիրառական պրակտիկայում իրացման ձևերի հիմնահարցերը չէր ենթարկում օրենսդրական կարգավորման:

*Հայաստանի «Անկախության հռչակագիրը» պատմաքաղաքական մեծ նշանակություն ունեցավ մարդու իրավունքների իրավական ինստիտուտի կայացման համար՝ սահմանելով, որ ոլորտի իրավական զարգացման ռազմավարությունը որոշում են միջազգային իրավական չափորոշիչները: Անկախության հռչակագրի ընդունումից հետո մարդու իրավունքների ինստիտուտի կայացումը ընթանում էր երկու ուղիով. ա) խորհրդարանական ընթացիկ օրենսդրական գործունեության միջոցով ստեղծելով մարդու անձ-*

<sup>11</sup> Տե՛ս «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, / «Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ..)», Եր., 1995, էջ 136:

<sup>12</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ..)», Եր., 1995, էջ 384-388:

<sup>13</sup> Այսպես ԳԴՀ Սահմանադրությունը (հոդված 25) և Ֆրանսիայի Սահմանադրությունը (հոդված 55) սահմանում էին, որ օրինական ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերը համարվում են ներպետական իրավունքի բաղկացուցիչ, իսկ հակասության դեպքում ունեն առաջնություն ներպետական օրենքների նկատմամբ (տե՛ս Международное право / Под ред. Н.Т. Булатовой, М., 1987, էջ 63):

<sup>14</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ..)», Եր., 1995, էջ 387:

նական, քաղաքական, տնտեսական ազատության իրավական հիմքերը, բ) մինչև անկախություն ձեռք բերելը միջազգային պայմանագրերի վավերացման միջոցով. 1991 թ. ապրիլի 1-ին ՀՀ Գերագույն խորհուրդը վավերացրեց «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային պայմանագիրը՝ կից ֆակուլտատիվ արձանագրությամբ»: Անկախություն ձեռք բերելուց հետո՝ մինչև 1995 թ., մարդու իրավունքների իրավական կայացումը տեղի էր ունենում նաև մարդու իրավունքներին վերաբերող միջազգային ակտերի զանգվածային վավերացման միջոցով:

Մարդու իրավունքների միջազգային իրավունքի ներպետական ոլորտում գործողության հարցում ՀՀ-ը հետևում էր խորհրդային իրավական դոկտրինայից բխող միջազգային պայմանագրերի իրացման երեք հիմնական ձևերին՝ տրանսֆորմացիան (ինկորպորացիան), ներպետական ակտում միջազգային ակտերին կատարվող հղումները՝ սահմանելով համալիր կիրառման կամ կոլիզիոն կիրառման կարգը, ինչպես նաև ընդունել էր միջազգային պայմանագրերի կիրառման կարգը սահմանող ընդհանուր օրենք: Վերջինս սակայն, չէր որդեգրել միջազգային և ներպետական իրավունքների հարաբերակցության նոր հայեցակարգ:

## THE MAIN ISSUES OF THE OPERATION OF INTERNATIONAL LAW OF HUMAN RIGHTS IN THE REPUBLIC OF ARMENIA IN 1990-1995

**Levon SHAKHPARYAN**

*A postgraduate student of Philosophy, Sociology  
and Law Institute of the National Academy of  
Sciences of the Republic of Armenia*

The Declaration of Independence of Armenia played a significant role in the development of the Institute of Human Rights in Armenia, establishing that the strategy of legal development of the sphere is defined by the international legal criteria on behalf of the Universal Declaration and the principle of respect for human rights. After the adoption of the Declaration of Independence, the Human Rights Institute was being established in two ways. First, through the current Parliament's legislative activities; creating the legal grounds of personal, political and economic freedom. The second way is the ratification of the international agreements before independence: on April 1, 1991 the Supreme Council of the Republic of Armenia ratified the International Covenant on Civil and Political Rights. After gaining independence, in parallel with the international recognition of the Republic of Armenia, until 1995, the legal establishment of human rights in the Republic of Armenia was carried out also through the mass ratification of the international instruments on human rights. From September 1991 to the beginning of 1995, 32 out of 148 international agreements were directly related to human rights. In the domestic sphere activities of international human rights the Republic of Armenia adhered to three basic forms of implementation of the international treaties that have arisen from the Soviet doctrines.